

ՆԱՄԱԿ ԽՄՐԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ԵՐԲ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ՏԱՐՐԱԿԱՆ ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆԸ

Սայաթ-Նովայի մասին գրած յուրաքանչյուր հոդված կամ հաղորդում սիրով և ուշադրությամբ է ընթերցվում իր անցյալի երախտավորներին արժանվուն գնահատող մեր ժողովրդի կողմից: Նորույթներին հետևում են թե՛ ընթերցողների լայն խավերը, թե՛ մասնագետները: Դա ավելի է պարտավորեցնում հեղինակներին՝ Սայաթ-Նովայի մասին հոդված կամ մտորումներ հրատարակելիս անհրաժեշտ զգուշություն ցուցաբերել: Այս տարրական ճշմարտությունը, սակայն, առանձին հեղինակների կողմից մոռացության է տրվում և օգտակար, բարեխղճությամբ, մեծ բանաստեղծի կյանքն ու գործը խորությամբ վեր հանող նյութերի շարքում մեր մամուլում երևան են գալիս իրադարձությունները խեղաթյուրող, փաստերը կամայականորեն ներկայացնող, առհասարակ անբարեխղճության կնիք կրող նյութեր:

Այս տարվա հուլիս-օգոստոս ամիսներին Սայաթ-Նովային նվիրված հոդվածներով հանդես է եկել Հ. Խաչատրյանը (երբեմն այս ստորագրությամբ հաջորդում է՝ «ՀՀԳ-ի թղթակից»): Նա գրել ու հրատարակել է երեք հոդված՝ «Սայաթ-Նովայի առաջին կենսագիրն ու հրատարակիչը» («Ավանգարդ», № 81), «Սայաթ-Նովայի տոհմածառը» («Երևան», № 161—162) և «Սայաթ-Նովայի առաջին ռուս ուսումնասիրողը» («Կոմունիստ», № 191, ռուսերեն):

Այդ հոդվածներում, ինչ խոսք, թիչ չեն մասսայական ընթերցողներին ներկայացվող հետաքրքրական տեղեկությունները: Բայց գրանցում կան բազմաթիվ սխալներ, որոնք շփոթություն են առաջացնում և կարող են նոր թյուրիմացությունների տեղիք տալ:

Սկսենք «Տոհմածառից»:

Հոդվածի նյութը հեշտությամբ կսպառվեք թերթի մի համարում տրամադրված տեղով: Այս դեպքում գուցե առարկելու էլ շատ բան չլիներ: Յավոք, հեղինակն այդպես չի վարվել: Թվարկներ առարկելիքը. Սայաթ-Նովայի հոր՝ Կարապետի, «Մղդախ» դառնալու շարժառիթների մասին հայտնի սկզբնաղբյուրներում ոչինչ չի ասված:

Մինչդեռ հոդվածագիրն առանց վերապահության մի ռոմանտիկ» («զաղթականի ցուպը ձեռքին») պատմություն է հյուսել, թե՛ փառումների ժամանակ Սայաթ-Նովայի հորը Երուսաղեմ հասցրել: Նախ, մահտեսի դառնալու համար ոչ թե Երուսաղեմ-քաղաքը պետք էր այցելել, այլ Հարության տաճարը, ուր, իբրև թե, Քրիստոսի գերեզմանն էլ Երկրորդ՝ Կարապետի ժամանակակից տասնյակ թիֆլիսցիներ առանց «զաղթականի ցուպի» են մահտեսի դարձել: Հոդվածագիրը պետք է իմանար, որ բախտի բերմամբ թե թափառումներով Երուսաղեմ հասած մարդը մահտեսի դառնալ չէր կարող: Դրա համար պահանջվում էր հատուկ, նպատակադիր ուխտագնացություն: Այլպես Երուսաղեմում ապրող բոլոր հայերը մահտեսիս վերդի կունենային, ուրեմն՝ Կարապետը, շատերի պես, հատուկ ուխտագնացության է դիմել, իսկ նրան վերագրվող «թափառումները» մտացածին են և անտեղի:

Սայաթ-Նովային վերաբերող Թեյմուրազ Արքայազնի վկայության մասին խոսելիս հոդվածագիրը թյուրիմացության մեջ է գցում ընթերցողին. Թեյմուրազի մոտ Սայաթ-Նովայի ծնողների մասին ակնառկ անգամ չկա: Նա Սայաթ-Նովային սանահինցի հայ է ճանաչում: Հոդվածագիրը կարող է այդտեղից մեկնություններ անել, բայց ոչ երբեք շեղածը հորինել: Հոդվածում կարդում ենք. «Բայց Թեյմուրազը լավ գիտեր Սայաթ-Նովային: Վերջինիս որդին՝ Օհանը սազանդար էր Թեյմուրազի մոտ»: Սա մեղմ ասած՝ լուրջ է: Օհանը զբաղմունքով վաճառական է եղել. այդ մասին պահպանվել է Բագրատ Արքայազնի հիշատակագրությունը (Թր., Ջեռագր. ինստ. 17-607, էջ 147ա) և, նույնիսկ Գեորգի XII-ի հրովարտակը (նույն տեղ. էջ 21բ): Գուցե Օհանի՝ Պետերբուրգում գտնվելու հանգամանքն է ստիպել հոդվածի հեղինակին նրան սազանդար սարքել, մինչդեռ Օհանը ևս արքունապատկան կիսասանկախ էր, և այդ ստիպմունքով էր Պետերբուրգ գնացել:

Հոդվածագիրը շարունակում է. «Սակայն ժամանակակիցները, ինչպես և վրաց արքունիքի

տոհմամատյաններում, Սառային համարել են սանահինցու աղչիկ, որովհետև նրա ծնողները եղել են բնիկ սանահինցի»:

Սայաթ-Նովայի մոր՝ Սառայի անունը երկու անգամ հիշվում է Ստեփանոս—Սայաթ-Նովայի 1766 թ. Կախո Փարվանսարայում գրազարած ձեռագրի հիշատակարանում (Մատենագարան, ձեռ. № 4270, էջ 100բ, 276բ): Գիտությունը դեռևս այլ աղբյուր հայտնի չէ: Հետաքրքիր է հողվածում ինչ «ժամանակակցի» կամ մանավանդ՝ «աբուսուլիի տոհմամատյանի» մասին և խոսվում: Հնարանքն իր սահմանն ունի: Այդպիսի տոհմամատյան» չկա: Եթե հեղինակը պարզապես չգիտե Քեյմուրազի վկայության տեղը, ապա ասենք, այն «Հնադարանի քարտարանն» է, ուր «Սառա» բառ չկա: Այս «Փարտարանը» ունի համառոտ և ընդարձակ պատում: Երկուսն էլ հրատարակված են: Ընդարձակը նույնիսկ Քրոսեի կողմից թարգմանվել է ֆրանսերեն (բնագիրը տե՛ս Քր., Ձեռ. ինստ., Ա—1091, էջ 99—100):

Եթե վրացական աղբյուրները կամ նրա ֆրանսերեն թարգմանությունը հասու չէր հեղինակին, ապա նա գոնե հասարակ տրամաբանության պետք է դիմեր. ի՞նչ գործ ունի հավաքարցի Սառան արրուների մտացածին տոհմամատյանի հետ:

Հողվածագիրը Ս. Գևորգ եկեղեցու շինության թիվը 630 կոչելիս օգտվել է Ս. Ավշյանի հողվածից («Էջմիածին», 1959 թ., № Բ, էջ 46—51) առանց վկայակոչելու այն, բայց անտեղյակ է Հ. Օրբելու ուսումնասիրությանը (Издбр. труды, стр. 217—221): «Հայոց 80 թվականը» վկայող արձանագրությունը 19-րդ դարում է փորագրված, ինչպես ուպացուցել է Հ. Օրբելին՝ 2—2-ի շփոթումով, իսկ արարականը, որի մասին խոսում է Օրբելին՝ 13-րդ դարում (1294 թ.):

Հողվածագիրը պնդում է, թե 1730-ական թվականներից Արուսիեն արդեն մեջիս էր մտնում աշուղների հետ: Այդ վկայությունը հաստատող որևէ աղբյուր չկա, բացի Գ. Ախվերդյանից, իսկ վերջինս լուկ իր լսած ավանդությունն է պատմում, որը այստեղ իրրև ապացուցված ճշմարտություն է ներկայացվում: Հողվածագրին, ինչպես երևում է, հայտնի չէր թաղամաստակ Կ. Կեկելիձեի կարծիքը Սայաթ-Նովայի տարիքի մասին՝ այս տարիներին (Վրաց. գրակ. պատմ., 1958 թ., հ. II, էջ 679, վրացերեն):

Րուրին հայտնի է, որ Մշո Ս. Կարապետ վանքը նշանավոր տեղ է Բայց ոչ մի փաստական հիմք չկա պնդելու, թե Սայաթ-Նովան եղել

է այնտեղ: Հողվածագիրը, ինչ որ ենթադրություններ անելու իրավունք ունի, բայց արտառոց է, կրք գրում է, թե «հնարավոր է, որ Սայաթ-Նովան Գևորգ Գորեցուն հանդիպած լինի հենց սուրբ Կարապետ վանքում»: Ինչպես երևում է, հեղինակը ծանոթ չէ Գ. Գորեցուն, որը կտուց անապատի վարդապետներից էր և գրում էր հայերեն ու վրացերեն, հակառակ պնդում կիմանար, որ նա ոչ թե «խաղեր» կամ «երգեր», այլ գուտ եկեղեցական ներդրումներ է գրել (Քր., Ձեռ ինստ., Ղ 368): Աշխարհիկ բովանդակության զործերը մերժող և մանուկներին «աշխարհիկ մուրուրություններից» հեռու պահելու ձգտում ունեցող Գորեցին, քնակա-նաբար, հարց է ծագում, ի՞նչ գործ ուներ աշուղական «սրբավայրի» հետ: Գորեցու կենսագրությունը ծանոթ ամեն մեկի համար դա բացառված է, և րուրովին իզուր է հողվածագրի խորհուրդը բանասերներին ժայս ուղղությամբ պրպտելու: Դա իր՝ հեղինակի հորինած սուղությունն է:

Հողվածագիրն առանց քննական մտեցման կրկնում է այն թյուր վարկածը, ըստ որի, իրր թե, Սայաթ-Նովան ամուսնացել է հենց 1759 թ.: Այդ ղեռ ոչինչ. մեզ համար ամենից զարմանալին Սայաթ-Նովայի ինքնագիր հիշատակարանի աղավաղումն է. հողվածագիրն առկոչում է հինգ հիշատակարաններից մեկը. «Ստեփանոս յահ. գրիչ թիֆլիսցի, որդի Կարապետի մականուն Սայաթ-Նովա: Սայաթ-Նովան այսպիսի հիշատակարան չունի և, հավանաբար, խոսքը սովոթեցող, լիշեայ գՍտեփանոս քահան(յ)այս Քլիսցի. գրեցաւ Կախ ՌՄԺՅ» հիշատակարանի մասին է:

Թյուրիմացություն կա նաև Սայաթ-Նովայի ընդօրինակած ձեռագրի Քավրիզում գտնվելու հարցում: Հողվածագիրը հաստատ համոզված է, որ «այդ ժողովածուն ընկնում է տոհմիկ ղեր-ձակներ Տեր-Արրահամյանների ձեռքը, որոնք մոտ 1800 թվականին Կախից փոխադրվում են Քավրիզ և իրենց հետ տանում բանաստեղծի ձեռագիրը»: Վատ հնարան է. տոհմիկ ղերձակը Տեր-Արրահամյան լինել չէր կարող, նրա Արրահամ պապը պետք է բահանա լիներ: Ո՛չ ձեռագրում, ո՛չ Աճառյանի և ո՛չ էլ Լ. Մելիքսեթի-Րեկի մոտ Տեր-Արրահամյան չկա: Ամենուր Մի-լի-Արրահամյան է: Ընգորում թյուրիմացություն է նաև Մելիք-Արրահամյանների «1800-ական թվականներին Կախից փոխադրվելու» մասին վկայությունը: Ձեռագրում եղած հիշատակությունն այս է. «Մայրհիսի Օվանէս Ղապարի, գրեցի 1814 Քավրիզ: Սա բանաստեղծություն վաղուց հայտնի ճշմարտություն է, ինչպես նաև հայտնի է, որ ձեռագիրը Մելիք-Ար-

րահամյան ընտանիք է անցել միայն 19-րդ դարի սկզբներին:

«Սայաթ-Նովայի առաջին կենսագիրն ու հրատարակիչը՝ հոգվածում հեղինակը գրում է, որ Գևորգ Ախվերդյանի «հայրը գեներալ էր»։ Սա ճիշտ չէ և այս անճշտությունը բազմաթիվ թյուրիմացությունների տեղիք է տալիս (այս սխալը հաճախ կրկնվում է նաև գրիթոյնգովագիտության և լեռնաբանության մեջ):

Գևորգ Ախվերդյանի հայրը ոչ թե հրետանու ղեկավար-մայոր Ֆյոդոր Իսահիչ Ախվերդովն էր, այլ պրոպագանդիստ Լախվերդի Ծնոթի Լախվերդյանը: Զինվորական այդ աստիճանը վերջինս ստացել էր 1829 թվականին, երբ գեներալն արգելն վաղուց վախճանված էր: (Տես Մոսկվայի պետ. համալսարանի արխիվ. Գ. Ախվերդյանի ուսանողական գործերը):

Այստեղից էլ բխում է այն 'սխալը, որ Ախվերդյանի «հայրը երկրորդ անգամ ամուսնանում է ռուս մեծ բանաստեղծ Մ. Լեռմոնտովի մորաքրոջ՝ Պրասկովյա Նիկոլևնա Արսենևայի հետ»։ Նախ, նշենք, որ Պրասկովյա Արսենևան Լեռմոնտովի մորաքույրը չէ, այլ տատի ազգականը: Եվ հետո, գեներալ Ախվերդովը երկրորդ անգամ՝ Արսենևայի հետ ամուսնացել է մինչև 1815 թվականի հունվարի 8-ը (առաջին կինը մահացել է 1811 թ.) և վախճանվել 1820 թ.

(И. Андронников, Лермонтов, 1951, стр. 161): Մինչդեռ Գ. Ախվերդյանի մայրը մահացել է ոչ շուտ քան 1830 և ոչ ուշ քան 1832 թվականը: Նրա խորթ մայրը Լզել է ոչ թե Արսենևան (որը 1818 թ. ծնված Ախվերդյանի համար ոչ թե խորթ, այլ հարազատ մայր կլիներ), այլ Թիֆլիսի վրացախոս Քումանովների ընտանիքի աղջիկ Քեթևանը, ծնված 1816 թվականին, այսինքն գեներալի երկրորդ ամուսնության առաջին տարում (տե՛ս, Գրականության և արվեստի թանգարան-այսուհետև՝ ԳԱԹ, ՄԿ. էմիլի արխիվ, II րաժ., № 718):

Համալսարանի ուսանողության համար սահմանված ոսկե մեդալ Գ. Ախվերդյանն ստացել է ոչ թե 1835, այլ 1836 թվականի հունիսի 9-ին (տես, ԳԱԹ, Գ. Ախվերդյանի արխ., II ր., № 230):

Անհիմն է նաև Գ. Ախվերդյանի և Մ. Լեռմոնտովի միջև մտերմական կապեր ստեղծելու փորձը: Առհասարակ նրանց կյանքի տարեգրությունը ոչ մի տեղ չի խաչաձևվում, նրանք չեն հանդիպել ու չեն մտերմացել: Համենայն դեպս այս մասին վկայող որևէ փաստաթուղթ մենք չունենք:

Հողվածագիրը ճիգեր է գործադրում որոշելու, թե երբ է Սայաթ-Նովայի դավթարը Տեր-

Մովսեսից անցել Գ. Ախվերդյանին և թեև մերթ կտրուկ, մերթ երերուն, տարբեր հոգվածներում տարբեր տարևթվեր է նշում, բնավ հոգ չտանելով Սայաթ-Նովայի կյանքով հետաքրքրվող ընթերցողի մասին: Այսպես Վավանգարդում նա գրում է. «Կարելի է ասել, որ մեծ բանասերը Տեր-Մովսեսից դավթարը վերցրել է 1845 կամ 1846 թվականներին»։ Իսկ «Ծրեանում»՝ «Սայաթ-Նովայի տոհմածառը հոգվածում այս առթիվ կարդում ենք. «1844 թվականին Տեր-Մովսեսը նշանակվում է Ներսիսյան դպրոցի տպարանի կառավարիչ և գրադարանապետ, որտեղ մնում է մինչև 1847 թվականը, Հավանաբար հենց այդ ժամանակ է Գևորգ Ախվերդյանը ներանից վերցնում Սայաթ-Նովայի դավթարը» (№ 162): «Կոմունիստում» այդ նույն փաստի մասին այսպես է գրել, «1846 թվականին նրան հաջողվում է գտնել Սայաթ-Նովայի ձեռագիր տետրակը»:

Յավը միայն այն չէ, որ միևնույն փաստի մասին հեղինակը երեք տարբեր թվական է նշում, այլ այն, որ երեքն էլ սխալ են:

Եթե հոգվածագիրը Գ. Ախվերդյանի առաջարանը գտնե կարդացած լինեք, կտեսնեք, որ Տեր-Մովսեսից Սայաթ-Նովայի դավթարը վերցրել է ոչ թե ինքը, այլ բժիշկ Հովհաննես Փոնդոյանը, տետրակը «հաջողվել է» գտնել ոչ թե իրեն, այլ Փոնդոյանին: Ինչո՞ւ մոռացության տալ Փոնդոյանի անշահախնդիր ծառայությունը (տե՛ս, Սայաթ-Նովա, Մոսկվա, 1852, էջ 49):

Այնուհետև. հայտնի է, որ Փոնդոյանը դավթարը Ախվերդյանին է հանձնել մայիս ամսին: Ո՞ր թվականին: Ըստ հոգվածագրի ստացվում է 1845, 1846, 1847, եվ եթե երկու դեպքում դա անում է ենթադրաբար «կարևոր է ասել», «հավանաբար», ապա երրորդում կոնկրետ նշում է 1846-ը: Բայց եթե հոգվածագիրը համբերություն ունենար և ուսումնասիրեր Ախվերդյանի կյանքի տարեգրությունը, կտեսնեք, որ 1846-ի մայիսին նա դեռ չէր վերադարձել Պետերբուրգից: Իրականում Փոնդոյանը Սայաթ-Նովայի դավթարը Ախվերդյանին է ներկայացրել 1848 թ. մայիսին (տես, ԳԱԹ, էմիլի արխ., II ր., № 735):

Ախվերդյանին նվիրված հոգվածում հեղինակն այնուհետև գրում է. «Ուշագրավ է, որ նախքան հայերեն լույս տեսնելը Սայաթ-Նովայի մի քանի խաղերը տպագրվում են ռուսերեն: Ախվերդյանի ուսանողական տարիների ընկերոս բանաստեղծ Յակով Պոլոնսկին... Ախվերդյանի օգնությամբ թարգմանում է մի քանի խաղեր և լույս ընծայում «Կավկազ»-ի առաջին և

երկրորդ համարներում» (սևականգարդ, № 81); Այս նույնը նա կրկնում է նաև Պոլոնսկու մասին գրած հոդվածում, ուր և ավելացնում է «մինչև նրանց (իմա՝ Սայաթ-Նովայի երգերի) հայերեն լույս տեսնելը, մեծ գուսանի երգերը տպագրվում են ռուսերեն... առաջինը հրատարակել է Պոլոնսկին... Պոլոնսկին հետաքրքրվել է մեծ գուսանի ստեղծագործությամբ և սկսել է մի քանի երգերի թարգմանությունը: սեպտեմբերի 1861 (պետք է լինի 1851—հեզ.) թվականի առաջին և երկրորդ համարներում նա տպագրում է մի քանի երգ և Սայաթ-Նովայի մասին մի փոքրիկ հոդված» (սեպտեմբեր, № 191):

Այս մեջբերումները, ինչպես հետո կտեսնենք, վկայում են, որ հոդվածագիրը բոլորովին ծանոթ չէ Պոլոնսկու աշխատանքին, նա շփոթել է Պոլոնսկու երկու հոդվածները, շիմանալով, թե որն ինչի մասին է: Պոլոնսկու առաջին հոդվածը, որը նվիրված է Սայաթ-Նովայի կենսագրությանն ու ստեղծագործությանը, տպագրվել է սեպտեմբերի 1851 թ. № 1 և 2-ում, Այն ամեննին էլ փոքրիկ չէ, ինչպես հոդվածագիրն է նշում: Պոլոնսկու այդ հոդվածում Սայաթ-Նովայից ոչ մի բանաստեղծություն չի տպվել (կան միայն մեջբերումներ): Նրա հոդվածը վերջանում է Սայաթ-Նովայի նմանությամբ գրած ինքնուրույն մի բանաստեղծությունով, որի մասին հեղինակը գրում է. «В заключение статьи моей, предлагаю стихотворение, написанное под влиянием одной из песен Саят-Нова. Не смею назвать стихи моим переводом, когда я писал их, я только помнил мотив и давал полную волю своей фантазии»:

Պոլոնսկու երկրորդ հոդվածը գրախոսական է, որի հետ նա տվել է նաև Սայաթ-Նովայի շորս երգի առաջին ռուսերեն թարգմանությունը: Այդ հոդվածը լույս է տեսել «սեպտեմբերի» 1853 թ. № 10—11-ում, որ դարձյալ ծավալով փոքր չէ: 1853 թվականին և ոչ թե 1852, որովհետև Ախվերդյանի հրատարակած Սայաթ-Նովան Թիֆլիզում ստացվել է 1853 թվականի հունվարի սկզբներին միայն (Տե՛ս, ԳԱԹ, Գ. Ախվերդյանի արխ., II ք., № 247): Ուրեմն Սայաթ-Նովայի երգերը, հակառակ հոդվածագրի պնդման, ռուսերեն տպագրվել են ոչ թե սեպտեմբերի հայերեն լույս տեսնելը, այլ դրանից հետո:

Վերահիշյալ երկու հոդվածներում, ինչպես տեսանք, Պոլոնսկին ներկայացրել է իբրև Ախվերդյանի ուսանողական տարիների ոնկեր: Զարմանալի է, ինչպե՞ս կարող էր 1838 թ. իրավաբանական ֆակուլտետ ընդունված Պոլոնսկին 1839 թ. բժշկական բաժնի ավարտած Ախվերդյանի ուսանողական տարիների ընկերը լինել:

Համալսարանում թերևս նրանք իրար երեսու անգամ չեն տեսել:

Վերադառնանք «Սայաթ-Նովայի տոհմածառին»:

Հոդվածում գրված է, որ Ջորաշեն սեկեղեցու պատի վրա այժմ էլ կա մի հուշատախտակ, որի վրա գրված է «Հանգիստ ոսկերաց Մովսես ավագ քհնյի Սայաթենց, 1810—1883»: Հետաքրքիր է, հոդվածագիրն այժմ կարող է ցույց տալ Ջորաշեն սեկեղեցու թեկուզ... տեղը: Չէ՞ որ այն վաղուց քանդված է: Այս առթիվ, ի միջի այլոց նշենք նաև, որ Տեր-Մովսեսը ծնվել է ոչ թե 1810 թվականին Թիֆլիսում, այլ 1801 թվականին Մոզդոկում: (ԳԱԹ, Գյուտ Աղանյանի արխ., շմշակված նյութեր):

Տոհմածառը կազմելիս, հոդվածի հեղինակը օգտվել է Սայաթ-Նովայի թոռան թոռ, 74-ամյա Աննա Սայաթ-Նովայի տվյալներից, բայց աղավաղել է նույնիսկ նրա ասածները: Այսպես՝ Փարիզում մահացել է ոչ թե Տիգրանի դուստր Շուշանիկը (որը վախճանվել է ոչ 1939 թ., այլ 1953 թ. Թբիլիսիում), այլ Բագրատի դուստր Վարյան (1948?), Դավթարը մաս-մաս անելու առաջարկ անողը եղել է ոչ թե Բագրատը, այլ նրա մեծ եղբայր Դևոզա: Դավթարը Թուրմանյանին է հանձնել ոչ թե Վարյան, այլ այլ նրա հայր Բագրատը, այն էլ ոչ թե անմիջապես, այլ նկարիչ Գ. Բաշինջաղյանի միջոցով:

Հետաքրքրական է, որն է այն աղբյուրը, որի համաձայն հոդվածագիրը գրում է, թե «Սայաթ-Նովայի մյուս դուստրը՝ Սառան, որը կրում էր իր տատի անունը, ունեցել է մի տղա՝ Մարտիրոս (Դուդյան) անունով: Մարտիրոսը հայտնի բժիշկ էր Թիֆլիսում: Այս Դուդյանից ծնվում է Աննա Դուդյանը՝ Պերճ Պոռչյանի կինը»: Այստեղ երկու անճշտություն կա: Նախ՝ Ղզարեցի Մարտիրոսը ոչ թե Դուդյան, այլ Դուդյան էր: Հետո՝ ո՞վ ասաց, որ նա Սառայի տղան է:

Իրոք, հայտնի է, որ Պերճ Պոռչյանի կինը՝ Աննա Դուդյանը, նրա բուլբուրը՝ Վարվառան, Աշխենը, Մարիամը (Մարկոս Աղաբեկյանի կինը) Սայաթ-Նովայի սերնդից են, բայց ո՞ր ճյուղով՝ դժվարանում ենք ասել: Դուդյան ինչ-րեբր, ինչպես և նրանց եղբայր Սմբատը Սայաթ-Նովայի տոհմագրության մեջ են մտնում ոչ թե իրենց հոր՝ Մարտիրոս Դուդյանի, այլ մոր՝ Շուշանի կողմից: Ինչպես կարելի է մօրը շփոթել ճոր հետ, ի՞նչ հոդվածագիրը լսածը տպագրված փաստով հաստատելու մի քիչ բարեխղճություն ցուցաբերեր, այդպիսի թյուրիմացության տեղիք չէր տա: Նա, մասնավորապես, կարողավ Պոռչյանի գրածը, կտեսներ, որ «Քանքարավոր Սայաթնովա երգչի տոհմից սե-

րած տիկին Շուշանը՝ Մարտիրոս Դոլգյանը չէ (տե՛ս, Պերճ Պոռոյան, Կովածաղիկ, Քիֆլիս, 1878 թ., էջ 4)։

Այժմ դառնանք ամենացավոտ կետին։

Մամուլը հողվածներով հեղեղելու մարմաշը և խմբագրություններում ցուցարբերած բարյացակամությունը հեղինակին սոսկալի փաստի առաջ են կանգնեցրել։ Նա բռնել է արտագրության, ավելի ճիշտ՝ գրագրության ուղին։

Այս տարվա հունիսի 21-ին «Գրական թերթ»

«Գրական թերթ» № 25

«Պոլոնսկին Ախվերդյանի օգնությամբ ուսումնասիրում է կովկասյան ժողովուրդների երգերն ու խաղերը և գալիս այն եզրակացություն, որ Սույաթ-Նովան միանգամայն ինքնատիպ երգիչ է, որ նա իր ստեղծագործությունների բեմատիկայի բազմազանությամբ և Ձեւի ԿԱՏԱՐՆԵԼՈՒԹՅԱՄԲ բացառիկ տեղ է գրավում իր ժամանակի ստեղծագործողների շարքում։

Ահա մի ուրիշ հատված․

«1852 թվին երբ Մոսկվայում արդեն լույս էր տեսել «Սայաթ-Նովան» Գ. Ախվերդյանի հրատարակությամբ Պոլոնսկին «Кавказ» լրագրում տպագրում է «Армянские ашухи» իր երկրորդ և ծավալուն հոդվածը, եվ այն, և այլն։

Հողվածագիրը հավանաբար չի առարկի, որ սա ուղղակի արտագրություն-թարգմանություն է։ Ի դեպ, նա որքան հաջող արտագրող, նույնքան էլ անհաջող թարգմանիչ է։ «Ձեւի կատարելությամբ» հողվածագրի մոտ դարձել

«Գրական թերթ» № 25

«Սայաթ-Նովան մարուր լիրիկ է, — գրում է Պոլոնսկին իր հողվածում, — և նույնիսկ մեր ժամանակի հասկացողությամբ ավելի անհատական։ Նրա ստեղծագործությունների մեջ չկան այն ֆանտիկ պատկերները, որոնք կարծես թե ստեղծում է հաշիյր։ Ընդհանրապես նրա ստեղծագործություններում նրեակայությունը բիշ տեղ է բռնում, առատ են զգացմունքները։ Բայց այդ զգացմունքներն էլ մեծ մասամբ արտահայտված են այնպես մեղմ, այնպես անդորր, որ կարծես նրա սերը նման է բարեկամության, իսկ բարեկամությունը՝ սիրո»։

Սրանք Պոլոնսկու հողվածի տարբեր մասերից ծաղկաբաղ արված նախադասություններ են։ «Գրական թերթի» հողվածագիրը, ազատ թարգմանելով, դրանք կցել է իրար, իսկ Հ.

թի» 25-րդ համարում տպագրվել է Արփիկ Ավետիսյանի «Սայաթ-Նովայի առաջին ռուս թարգմանիչը» հողվածը՝ նվիրված Պոլոնսկուն, «Կոմունիստի» օգոստոսի 14-ի՝ 191-րդ համարում էլ տպագրվել է Հ. Խաչատրյանի «Սայաթ-Նովայի առաջին ռուս ուսումնասիրողը» հողվածը։ Թեթևակի համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ վերջինս ուղղակի արտագրել է «Գրական թերթի» նշանակալի մասը։ Դիմենք օրինակներին։

«Коммунист» № 191

«Для того, чтобы глубже изучать поэзию Саят-Нова, Полонский обращается к грузинским и азербайджанским песням и народному творчеству этих народов.

Полонский... находит, что Саят-Нова самобытный певец, по разнообразию тематики и ФОРМЕ ИСПОЛНЕНИЯ занимает среди современных ему поэтов исключительное место».

«В 1852 году, когда в Москве появилась изданная Г. Ахвердяном книга песен Саят-Нова, Полонский напечатал в «Кавказе» вторую статью под заглавием «Армянские ашуги». И т. д., и т. д.

Վ. «по... форме исполнения». Ինչպես տեսնում ենք «կատարելություն» (совершенство) բառը նա շփոթել է «կատարել» (исполнять) բայի հետ։

Ահա առավել ցցուն մի փաստ ևս։

«Коммунист» № 191

«Саят-Нова, — пишет Полонский, — чистый лирик, и даже по понятиям нашего времени более индивидуален. В его произведениях нет тех фантастических картин, которые созданы Гафизом. Вообще в его произведениях воображение занимает мало места, в них обильно чувство. Но и чувства большей частью выражены так мягко, так безмятежно, как будто его любовь похожа на дружбу, а дружба на любовь».

Խաչատրյանը առանց երկար-բարակ մտածելու, նույնությամբ ընդօրինակել է նրանից։ Ստացվել է ոչ թե Պոլոնսկու բնագիրը, այլ նրա աղճատված թարգմանության ազավաղ-

ված թարգմանությունը: Այլապես առաջինի մոտ ֆանտաստիկը ֆանատիկ, իսկ երկրորդի մոտ՝ հաշիշը Հաֆիզ չէր դառնա:

Ընդհանուր և ճշմարտացի պատկերը տալու համար բերենք Պոլոնսկու բնագիրը:

«Саят-Нова, напротив, поэт чисто лирический и, быть может, слишком личный по понятиям нашего времени... В песнях Саят-Нова... нет и тех фантастических образов, которые как будто порождает опиум.— Вообще в стихах его мало воображения—много чувства, но и это чувство там, где оно высказывается в стихах его — по большей части так тихо и так глубоко безмятежно, что любовь его похожа на дружбу — дружба на любовь».

Հ. Խաչատրյանը, ի դեպ, փաստերի աղավաղման գործում նույնքան հետևողական է նաև Լենինականի «Բանվոր» թերթում (№ 94) տպագրած «Սայաթ-Նովայի երկերի հրատարակությունները» հոդվածում: Նրա «կարծիքով» Ախպերդյանի հրատարակության «տպարանակը չէր

անցնում հինգ հարյուրից»: Ամենեցուն է հայտնի, որ Ախպերդյանի «Սայաթ-Նովան» լույս է տեսել 1200 օրինակ տպաքանակով: Հոդվածագիրը հարյուր տաս տարի հետո նոր տպաքանակ է սահմանում:

Արտագրության օրինակներ վկայակոչելիս մենք սահմանափակվեցինք սոսկ վերոբերյալով, մինչդեռ անհրաժեշտ էր համեմատել Գ. Լևոնյանի «Գ. Ախպերդյան» ուսումնասիրությունը ևս:

Ամփոփենք. Հ. Խաչատրյանի հոդվածները չի են սխալներով, աղավաղումներով: Հեղինակը սլատշաճ հարգանք չի դրսևորել Սայաթ-Նովայի հիշատակի հանդեպ, դիմել է արատավոր մեթոդների:

Ինքը Սայաթ-Նովան էլ նման դեպքերի համար, կարծես թե գուշակելով մեր հոդվածագրի գալուստը, նկատել է. «Ամեն քալից խոսկ դուս գու քա, Սայաթնովեն ի՞նչ անե...»:

Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ